Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար պարոն Սերգո Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գործուղված անձիք**

| | |
|---|---|
| Արսեն Նիկոյան | շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ |
| Մարինե Սարիբեկյան | շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ |

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Այցելություն Վրաստան, ք. Գորի՝ 2024 թվականի փետրվարի 19-22-ը

3. **Հրավիրող կողմը.**

ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր և Լեռնային շրջանների կայուն զարգացման կովկասյան ցանց

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի և Լեռնային շրջանների կայուն զարգացման կովկասյան ցանցի աջակցությամբ իրականացվող «Կլիմայի փոփոխության հարմարվողականության խնդիրները բարձրադիր գոտիներում» տարածաշրջանային հանդիպմանը: Հանդիպման նպատակն էր բարձրացնել լեռնային համայնքների դիմակայունությունը կլիմայի փոփոխության նկատմամբ:

5. **Քննարկված թեմաները (հարցերը).**

Հանդիպման ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- ✓ Լեռնային հարմարվողականության ծրագրի և փոքր դրամաշնորհային ֆինանսավորման սխեմաների նախագծի ներկայացում,
- ✓ փոքր դրամաշնորհային ֆինանսավորման սխեմաների նախագծի վերաբերյալ կարծիքների ներկայացում աշխատանքային խմբերում,
- ✓ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ընտրված լեռնային համայնքների ներկայացուցիչների կողմից համայնքների կլիմայի փոփոխության ռիսկերի և հարմարվողականության գործողությունների վերաբերյալ ներկայացումներ,
- ✓ Լեռնային հարմարվողականության գրքույկում ներկայացված լուծումների վերաբերյալ ներկայացում,
- ✓ Լեռնային հարմարվողականության ծրագրի իրականացման և պիլոտային փոքր դրամաշնորհների ֆինանսավորման սխեմայի փորձարկման առաջիկա քայլերի վերաբերյալ կարծիքների փոխանակում:

6. **Հանդիպումները, ելույթները.**

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի նախարարությունների, ընտրված համայնքների, հասարակական և քաղաքացիական կազմակերպությունների, «Քաղաքապետերի Դաշնագիր» համաձայնագրի ներկայացուցիչներ, ինչպես նաև ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի և Լեռնային շրջանների կայուն զարգացման կովկասյան ցանցի փորձագտներ և ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ հրավիրված էին շուրջ 30 ներկայացուցիչ: Յուրաքանչյուր երկիր ներկայացրեց իր կողմից ընտրված համայնքի հարմարվողականության ծրագրի նախագիծը: Հայկական պատվիրակության կողմից ներկայացվեց Գավառ համայնքի քաղաքային զբոսայգու վերականգնման ծրագրի նախագծի տեսլականը:

Հանդիպման առաջին օրը հայկական պատվիրակության կողմից ողջույնի խոսքով հանդես եկավ միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ Արսեն Նիկոյանը, այնուհետև խոսքը փոխանցեց կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Մարինե Սարիբեկյանին: Վերջինս ներկայացրեց կլիմայի փոփոխությունն ազդեցությունը Հայաստանի լեռնային համայնքների վրա և համայնքային մակարդակում հարմարվողականության միջոցառումների իրականացման կարևորության վերաբերյալ:

Հանդիպման շրջանակներում այցելություն է եղել նաև լեռնային հարմարվողականության վայրեր՝ Աթենի կիրճ և Ուպլիսցիխե քաղաքի քարանձավներ:

7. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համայնքի ընտրության նպատակով կազմակերպիչները ներկայացրել էին չափորոշիչներ կլիմայի փոփոխության նկատմամբ առավել խոցելի լեռնային համայնքներում հարմարվողականության ծրագրեր իրականացնելու համար: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցելով՝ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքն ընտրվել էր որպես Հայաստանի կողմից ծրագրի մասնակից համայնք, քանի որ առավելագույնս համապատասխանում էր կազմակերպիչների կողմից ներկայացված չափանիշներին: Վրաստանի և Ադրբեջանի կողմից որպես ծրագրի մասնակից համայնքներ էին ընտրվել համապատասխանաբար Օնի և Շեկի համայնքները: Վերջիններիս կհատկացվի 30. 000 հազարական ԱՄՆ դոլլար՝ հարմարվողականության գործողություններ իրականացնելու համար: Ըստ կազմակերպիչների՝ ս/թ հունիս ամսին առաջին փուլով կհատկացվի  ֆինանսավորման որոշակի մաս:

*Գործուղվողներ՝* *Արսեն Նիկոյան*

*Մարինե Սարիբեկյան*

*28.02.2024 թ.*